

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1

Ք.Արթիկ

18.10.2007թ.

(տասնութ հոկտեմբերի երկուհազար յոթ /թ.)

Արթիկի «ԼԴ-97» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն այսուհետ՝ «Վարձատու» ի դեմս տնօրեն Դերենիկ Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից

և ՀՀ Աշխատանքի և սոց. հարցերի նախարարությունը այսուհետ՝ «Վարձակալ» ի դեմս աշխատակազմի ղեկավար Չոնիկ Մարգարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ոչ բնակելի տարածք, այսուհետ՝ «Օբյեկտ», որը գտնվում է ՀՀ ք. Արթիկ Բաղրամյան 39 հասցեում, որպես գրասենյակ օգտագործելու համար:

Վարձակալության հանձնվող / 13,15,16,18,19,20,21,30,31,32,33,34/տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 80 /ություն/ քառակուսի մետր:

1.2 Սույն պայմանագիրը գործում է /տաս/տարով, 01.01. 2008թ. մինչև 01.01.2018թ./մեկը հունվարի երկուհազար ութ թ.-ից մեկը հունվարի երկուհազար տասնութ/ թվականը:

1.3 Վարձատուն վարձակալության հանձնվող օբյեկտի սեփականատերն է, ինչը հաստատվում է հետևյալ փաստաթղթերով՝ սեփականության վկայագիր:

1.4 Վարձատուն երաշխավորում է, որ օբյեկտը վաճառված, գրավ դրված ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված, կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

1.5 Վարձակալության հանձնված օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1 Պահանջել Վարձակալից՝ օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2 Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.

- 2.1.3 Եթե վարձակալը օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին, կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:
- 2.2. Վարձատուն պարտավոր է՝
- 2.2.1. Օբյեկտը վարձակալին հանձնել հանձնման-ընդունման ակտով՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 3 օրվանից ոչ ուշ: Հանձնման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:
- Նշված ակտը կցվում է պայմանագրին /թիվ 1 հավելված/ և դրա անբաժանելի մասն է.
- 2.2.2. Օբյեկտը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.
- 2.2.3 Օբյեկտը վարձակալին հանձնել դրան վերաբերվող փաստաթղթերով
- 2.2.4 Վարձակալին նախագուշացնել վարձակալության հանձնվող օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների /գրավի իրավունք, սերվիտուտ և այլն/ մասին.
- 2.2.5 Մեկամյա ժամկետում քննարկել օբյեկտի նշանակության փոփոխման, ինչպես նաև դրա վերանորոգման և վերասարքավորման հարցերի հետ կապված վարձակալի դիմումները.
- 2.2.6 Վարձակալի հաշվին կնքել վարձակալության հանձնվող օբյեկտի ապահովագրության պայմանագիր:
- 2.3. Վարձակալն իրավունք ունի՝
- 2.3.1. Պահանջել վարձատուից՝ սույն պայմանագրի 2.2.1 կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել օբյեկտը.
- 2.3.2. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու օբյեկտին վերաբերվող փաստաթղթերը.
- 2.3.3. Օբյեկտի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թրություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝
- 2.3.3.1 պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը.
- 2.3.4. պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, օբյեկտի վիճակը վատթարացել է
- 2.3.5.1 Վատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը:
- 2.4. Վարձակալը պարտավոր է՝
- 2.4.1. Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և օբյեկտի նշանակությանը համապատասխան

- 2.4.2. Ժամանակին մուծել օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վճարը /վարձավճարը/.
- 2.4.3 Պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում ժամանակին փոխանցել օբյեկտի ապահովագրական վճարը.
- 2.4.4 Իր հաշվին կատարել երկարաժամկետ վարձակալված օբյեկտի կապիտալ վերանորոգումը.
- 2.4.5 Ապահովել օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը.
- 2.4.6 Առանց վարձատուի գրավոր համաձայնության՝ օբյեկտում չկատարել փակ և բաց լարանցումներ և չանցկացնել հաղորդակցության ուղիներ, չանել վերանախագծումներ և վերասարքավորումներ:
- Վարձակալի կողմից օբյեկտի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի կամ ծածկերի ամբողջականության խախտում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում դրանք պետք է վերացվեն, իսկ տարածքը բերվի իր նախկին տեսքին՝ վարձակալի հաշվին և վարձատուի որոշած ժամկետում:
- 2.4.7 Վարձակալած օբյեկտի տարածքներում պահպանել սանիտարահակահամաճարակային կայանների, պետիրշեջվերահսկողության մարմինների պահանջները, ինչպես նաև բոլոր այն կանոնները, որոնք գործում են վարձակալի գործունեության ձևերի ու վարձակալած օբյեկտի նկատմամբ.
- 2.4.8 Վարձատուի որոշած ժամկետներում ազատել տարածքները՝ կապված օբյեկտի /կամ դրա մի մասի/ կառուցվածքների /կոնստրուկցիաների/ վթարային վիճակի, օբյեկտը հիմնական վերանորոգման ենթարկելու, կամ քաղաքաշինության նկատառումներով այն քանդելու հետ.
- 2.4.9 Օբյեկտը և դրան հարող տարածքը պահպանել պատշաճ սանիտարական վիճակում, ինչպես նաև մշտապես պատշաճ վիճակում պահպանել օբյեկտի ճակատային մասերը.
- 2.4.10 Վարձատուին անմիջապես տեղեկացնել օբյեկտի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել/ կամ սպառնում է հասցնել / օբյեկտին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև օբյեկտը հետագայում քանդվելու կամ վնասվելու դեմ.
- 2.4.11 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 10/տասը/ օրվա ընթացքում այլ կազմակերպությունների հետ կնքել պայմանագրեր՝ վարձակալած օբյեկտը

- 2.4.12 Առանց վարձատուի գրավոր համաձայնության չկնքել գրավի, 3.4 ենթավարձակալության պայմանագրեր և չմտնել գործարքների մեջ /իրավաբանական անձի կանոնադրական /բաժնեհավաք/կապիտալի մեջ օբյեկտի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում/: Առանց նշված համաձայնության՝ վարձակալի կողմից նման պայմանագրեր կնքելը, կամ նման գործարքներ կատարելը հիմք է պայմանագրի միակողմանիորեն լուծման համար.
- 2.4.13 Ապահովել վարձատուի և նրա ներկայացուցիչների անարգել մուտքն օբյեկտ՝ դրա զննման և ստուգման համար.
- 2.4.14 Ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական դեպքը վրա հասնելու դեպքում անհապաղ այդ մասին հաղորդել համապատասխան իրավասու մարմիններին/ ոստիկանություն,հրշեջ ծառայություն, հաղորդակցության ուղիների անվտանգությունն ապահովող ծառայություն և այլն/ և ապահովագրական կազմակերպությանը՝ վերջինիս ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռելով զննել տարածքը.
- 2.4.15 Ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված օբյեկտի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ.
- 2.4.16 Օբյեկտն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.
- 2.4.17 Սահմանված ժամկետում կատարել վարձատուի կարգադրությունները՝ ուղղված իր գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը,որոնք վտանգի տակ են դնում օբյեկտը, իսկ վարձակալված օբյեկտից դուրս՝ բնապահպանական և սանիտարական իրավիճակը:

3. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները

- 3.1 Պայմանագրի կնքման պահին օբյեկտի համար եռամսյակային վարձավճարը սահմանվում է 90000/իննիսուն հազար / դրամ:
- 3.2 Դրամի արժեզրկման դեպքում վարձատուն իրավունք ունի միակողմանիորեն փոխել վարձավճարի չափը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով վարձակալին:Նշված ծանուցումը պետք է կատարվի այնպես, որ վարձակալը դրան ծանոթանա կամ հնարավորություն ունենա ծանոթանալու ոչ ուշ, քան համապատասխան վճարումը կատարելուց մեկ ամիս առաջ:
- 3.3 Վարձակալը վարձատուի հաշվին փոխանցում է վարձավճարը, ինչպես նաև վճարման հանձնարարականում առանձին տողով նշված՝ ավելացված արժեքի հարկը պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից, յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա 10-ից /տասից/ ոչ ուշ:

Պավի,
մեջ
կտի
ված
յան

3.4 Վարձակալն ամեն եռամսյակ մուծում է ապահովագրական վճարը, որն իրականացնում է ապահովագրական վճարի գումարը նշված ապահովագրական կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
Յուրաքանչյուր եռամսյակի համար ապահովագրական վճարի մուծումը կատարվում է նախորդ եռամսյակի վերջին ամսվա քսանհինգից ոչ ուշ:

4. Կողմերի պատասխանատվությունը

ա
ս
է

- 4.1. Վարձակալը պայմանագրի 3.1. կետում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար վարձատուին վճարում է տուգանք՝ 1000/մեկ հազար/ դրամի չափով:
- 4.2. Պայմանագրի այլ պայմանները խախտելու դեպքում մեղավոր կողմը վճարում է տույժ՝ եռամսյակային վարձավճարի գումարի 1% տոկոսի չափով.
- 4.3. Տուգանքի /տույժի/ մուծումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կանտարելուց:
- 4.4. Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում վարձատուի պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:
- 4.5. Վարձատուն պատասխանատվություն չի կրում օբյեկտի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի է եղել վարձակալին կամ պետք է հայտնաբերեր օբյեկտը զննելիս:

5. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

- 5.1. Վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝
 - 1.1. Օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով.
 - 5.1.2. Էականորեն վատթարացրել է օբյեկտի վիճակը.
 - 5.1.3. Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.
 - 5.1.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել օբյեկտի ընթացիկ վերանորոգումը.
- 5.2. Վարձակալի պահանջով՝ սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝

5.2.1. Վարձատուն վարձակալի օգտագործմանը չի տրամադրել օբյեկտը, կամ խոչընդոտներ է ստեղծել օբյեկտը պայմանագրի պայմաններին, կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

5.2.2. Հանգամանքների բերումով, որոնց համար վարձակալը պատասխանատու չէ, օբյեկտը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

6 Հատուկ պայմաններ

6.1. Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած այլ ժամկետում:

6.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրերով:

6.3. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման, կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ- ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3/երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Կողմերի հասցեները


ՎԱՐՁԱՏՈՒ

«ԼԴ-97» ՍՊՈՐ ՏՆՕՐԵՆ



ՎԱՐՁԱԿԱԼ

«ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑ. ՀԱՐՑԵՐԻ»
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ
Լ. ՍԱՐԳՍՅԱՆ



24 10 2007 թվականին ստեղծված հայրենագիրը վավերացված է
ԽՈՒՄ Արմենիա (տոտալ) Արմենիա
Կողմից:

Կողմերը պայմանագրից ստորագրելով իր ստորագրությամբ Մայնանդի-
աստրազիան անձանց ինքնուրույն, առանց գործառնակությունից ինչպես նաև
փրակարանական անձի) փրակարանակալության, նրա կողմնակալության և
նրա և անշարժ գույքի նկատմամբ ՀՀ - ԳՄ ԿՄ
տարբերակները ստորագրում են

Գործարարական ընկերություն ՏՇՅ կամ: Խանձակ: ՍՏԻ
պայմանագրից ծագող իրավունքները կապված են գրանցման անշարժ գույքի
պետական կադաստրի համապատասխան ստորագրմանուժամ:

Գրանցման համար 2793
Գրանցման ամսաթիվ 2007
Գրանցման պատճեն Արմենիա
Կողմից:

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմաններում փոփոխություններ կատարելու մասին

Քաղ.Արթիկ

11.09.2013թ:

Մի կողմից <<ԼԴ-97>> ՍՊԸ տնօրեն Դ.Հովհաննիսյանի, մյուս կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյանի, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

24.10.2007թ. Պետ.նոտարական գրասենյակի Արթիկի Պետ նոտարի կողմից հաստատված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին: ա/ Պայմանագրի 3.1 կետը վերաձևակերպել հետևյալ բովանդակությամբ.

3.1 Օբյեկտի համար ամսեկան վարձավճարը սահմանվում է 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

բ/ Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 01.01.2013թվականից:

Վարձատու՝

Վարձակալ՝

<<ԼԴ-97>> ՍՊԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

հասցեն՝ Շ/Մ, քաղ.Արթիկ

հասցեն՝ Շ/Մ, քաղ.Արթիկ, Բաղրամյան 39

Բաղրամյան 39

Արթիկի ՏԳԲ, ՀՀ 900201062024

<<ԱՇԻԲ>> Արթիկի մ/ճ

ՀՎՀՀ 061005332

հհ 247040008911 ՀՎՀՀ 061004511

հեռ. 0244-5-41-70

հեռ.0244-5-24-70

Տնօրեն՝ Դ.Հովհաննիսյան

Ղեկավար Ա.Գրիգորյան

Կ.Տ.



Ք. Արթիկ

<<25>> <<08>> 2014թ.

Մենք՝ մի կողմից ԼԴ-97 ՍՊԸ-ի, իրավաբանական հասցեն՝ ք.Արթիկ, Բաղրամյան 39(երեսունինը) ի դեմս տնօրեն՝ Դերենիկ Լևոնի Հովհաննիսյանի (անձնագիր 001369321, տրված 27.12.2012թ., 028-ի կողմից, ծննդյան ամսաթիվը՝ 06.04.1951թ., հաշվառման վայրի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Արթիկ, Կոմիտաս փողոց, տուն17(տասնյոթ)),որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության համաձայն (այսուհետ՝ Վարձատու) մի կողմից և << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Աշոտի Գրիգորյանի, իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, 10 (տասը) Կառավարական տուն 3 (երեք), հաշվառված՝ Գեղարքունիքի մարզ գ. Աստղածոր, անձնագիր AE 0279516, տրված 043.30.03.1999թ., որը գործում է նախարարության կանոնադրության համաձայն (այսուհետ՝ Վարձակալ), մյուս կողմից կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

- 1.1. <<24>> հոկտեմբերի 2007թ. կնքված՝ թիվ N 1 պայմանագրում (այսուհետ՝Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունը:
- 1.2. Պայմանագրի 1,1 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ <<Սկսած 2014թ. հուլիսի 1-ից վարձակալության հանձնվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 64(վաթսունչորս) քառակուսի մետր>>:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

- 2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:Սույն համաձայնագրի գործողությունը տարածվում է Կողմերի միջև 2014թ հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:
- 2.2. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
- 2.3. Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. Այլ պայմաններ

- 3.1. Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.2. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
- 3.3. Սույն Համաձայնագիրը կազմված է 2(երկու) էջից: Համաձայնագիրը կնքվում է 2(երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐՁԱՏՈՒ
ԼԴ-97 ՍՊԸ
Հասցե՝ Ք.Արթիկ Բաղրամյան 39
Բանկի անվանումը՝ԱՇԻԲ ՓԲԸ Արթիկի մասնաճյուղ
h/h՝247040008911
ՀՎՀՀ՝06104541

ԼԴ-97 ՍՊԸ-ի տնօրեն Դերենիկ Լևոնի Հովհաննիսյան, Անձնագիր 001369321, տրված 27.12.2012թ., 028-ի կողմից, հաշվառված՝ Շիրակի մարզ, քաղաք Արթիկ, Կոմիտասի փողոց, տուն N17

Դերենիկ Հովհաննիսյան

ՎԱՐՁԱԿԱԼ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան 10, կառավարական 3 շ
Բանկի անվանումը՝ Արթիկի ՏԳԲ
h/h՝ 900201062024
ՀՎՀՀ՝ 06100532

Աշխատակազմի ղեկավար Արտակ Աշոտի Գրիգորյան, հաշվառված՝ Գեղարքունիքի մարզ գ. Աստղածոր, անձնագիր AE 0279516, տրված 043, 30.03.1999թ.:

Արտակ Գրիգորյան